community

The New Apostolic Church around the world

03/2016/AM



Հաղթել Քրիստոսով՝

Վճռելն ասեն ինչ է

Ժամերգություն Անգոլայում՝ Թանկ գնված

Դավանաբանությունից՝ Տեսություն ապագա երևույթների մասին

Քրիստոնեության պատմությունից

New Apostolic Church
International

Վճռելն ամեն ինչ է

ՆԱԵ միջազգային

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Նոր կտակարանի նամակներում մենք գտնում ենք շատ ապացույցներ, թե ինչպես կարող են Քրիստոսով հաղթել: Այնտեղ կա նաև Պողոս առաքյալի կյանքի հաշվեկշիռը. ,, Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը, և հիմա ինձ է սպասում արդարության պսակը,, /2. Տիմոթեոսին 4,7-8/: ,, Հաղթել,՝ հավատի տեսանկյունով չի նշանակում բոլորից լավը լինել, այլ՝ հաղթահարել և նպատակին հասնել:

Կորնթացիներին, եբրայեցիներին և ֆիլիպացիներին ուղղված նամակները նմանապես օգտագործում են մարզիկի և մրցապայքարի օրինակը; Դրանք օգնում են վարժեցնելու մեր տոկունությունը: Ով ուզում է մինչև վերջ դիմանալ, նա պետք է դրան համապատասխան

- նպատակը իմանա. Մենք ուզում ենք հավերժ փառահեղություն ոտք դնել, դրա համար պետք է միշտ Քրիստոսին ավելի նմանվենք: Արդյո՞ք բավարար չափով ենք դա անում:
- նպատակը աչքի առաջ պահել. Եկեք ցնծությունից կամ այլ կոչերից չշեղվենք ճանապարհից եզրագծից դեպի դուրս:
- տարածությունը բաժանել. Չպետք է վհատվել Հիսուսի էությունից այդքան հեռու գտնվելու համար: Մենք կարող ենք ամեն անգամ մի առանձին հատկանիշ որոշել, որպեսզի դրանով հստակ գիտակցված մի քիչ էլ ապրենք
- ուժերը բաժանել. հավատքային կյանքում ում ուժերը տեղի են տալիս, նա կարող է կարճատև դառնալ դեպի բնական երևույթները և կենտրոնանալ հոգևորի վրա.
- բեռը ոը դեն նետել. Մեղքն ու անհաշտվողականությունը դժվարացնում են ընդառաջ գնալը: Փնտրենք ներում և նվիրենք ներում:
- դիետա պահել. Ո՞ր սնունդն է ուժեղացնում մեզ հավատքի ընթացքի համար: Հոգին այնպես կոփենք, որ ուժեղանա տևողության ընթացքում: Դա ամենից առաջ Աստծո խոսքն է և Սուրբ Ընթրիքը:

Վճռելն ամեն ինչ է- այսպես է հնչում հայտնի օլիմպիական միտքը: Հավատքի ընթացքի համար կարևոր է վճռելը: Եկեք մենք էլ անսանք 1 Տիմոթեոս 6,12–ում հնչած կոչին. ,, Հավատի բարի մարտը մղիր և պինդ կառչիր հավիտենական կյանքից, որին կանչվեցիր,,:

Սրտանց ողջույններ, ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

Լուսանկարը՝ Հերման Բեռկե և ԵՆԱ Անգրա

Մեծ գնով գնվեցիք

1. Կորնթացիներին 7,23

Մեծ գնով գնվեցիք: Մարդկանց ծառաներ մի եղեք:

Սիրելի եղբայրներ և քույրեր, երգիչների երգը մեր ուրախության արտահայտությունն է, որ մենք այսօր այս ժամերգությունն ապրելու իրավունքն ունենք: Ես այս ուրախությունը կիսում եմ ձեզ հետ: Ես կարող եմ պատկերացնել, որ մեզ հետ եղբայրներ ու քույրեր կան, ովքեր այքան էլ ուրախ չեն, ոչ թե՝ նրա համար, որ չեն կարողանում հավատալ, այլ՝ քանի որ քննությունների միջով են անցնում, շատ հոգսեր ունեն և շատ մտքեր իրենց և իրենց երեխաների ապագայի հանդեպ: Ես կուզենայի այդ եղբայրներին ու քույրերին ասել. Եղբայր, քույր, դու մոռացված չես, Աստված ուզում է այսօր քեզ մխիթարել և ուժեղացնել: Նա ուզում է, որ դու իր մոտիկությունը զգաս. Աստված շատ մոտ է քեզ: Նա քեզ վստահեցնում է, որ օգնելու է: Ամենամեծ օգնությունը, որ Աստված ուզում է մեզ տալ,չարիցփրկությունն է: Դա ավելին է, քան միանգամից հիվանդությունից ազատվելը: Նա ուզում է այն բանի համար հոգ տանել, որ մենք հավերժ փրկվենք բոլոր տառապանքներից, չարից, չարիքից: Ուրեմն՝ մխիթարվիր, Աստված գործում է, որ քեզ օգնի: Այդ աշխատանքը սկսվել է, երբ Աստծո Որդին իր կյանքը մեզ համար տվել է: Դա նկատի ունի Պողոսը, երբ ասում է.,, Թանկ գնով եք գնված,,:

Ադամի և Եվայի մեղքի մեջ ընկնելու պատճառով բոլոր մարդիկ դարձան մեղքի գերին: Մենք կրում ենք չարի ազդեցությունը, քանի որ մենք նրա իշխանության տակ ենք գտնվում: Բոլոր հիվանդությունները, անարդարությունները, տառապանքն ու մահը այդ մեղքի հետևանքն են: Ծնվելու պահից ի վեր մարդը մեղքի ծառան է դառնում: Դրանից է ուզում մեզ Տերը փրկել, դրա համար է նա մեզ մեծ գնով գնել: Նա տվեց իր կյանքը, մեր փոխարեն նա դատապարտվեց, դատվեց և սպանվեց: Նա, ով կատարյալ էր, ով երբեք ոչ մի սխալ չէր արել, ընդունեց, որ ինքը պետք է դատապարտվի, որպեսզի մենք չդատապարտվենք: Նա պատժվեց, որպեսզի մենք չպատժվենք մեր սխալների ու մեղքերի պատճառով: Նրա ծառայությամբ մենք կարող ենք փրկվել:

Աստված մեզ այնքան սիրեց, որ իր Որդուն զոհաբերվեց մեզ համար: Հիշենք նաև այն մասին, թե ինչ ձեռնարկեց իր Որդու զոհաբերությունից հետո, որպեսզի մենք ճաշակենք նրա ծառայությունը: Նա ուղարկեց Սուրբ Հոգուն, ուղարկեց առաքյալներին, նա դարեր շարունակ մտահոգվել է, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը տարածվի: Կային ժամանակներ, որ շատ

> Մենք չպետք է մեր սեփական ճանապարհով գնանք, մենք հետևելու ենք Հիսուս Քրիստոսին: Մենք գիտենք, որ ով պայքարում է Հիսուս Քրիստոսի հետ, հաղթելու է:

13.800 մասնակիցներ են եկել ժամերգության ,, Սիտադելա,, վասկետբոլի մարզադաշտ և հարակից սրահներ:

մարդիկ էին Ավետարանն ընդունում, կային նաև այլժամանակներ, ժամանակներ, երբ քրիստոնյաները հալածվում էին, բայց Աստված միշտ հոգացել է, որ այդ գործը շարունակվի:

Մենք հիշում ենք այն բազմաթիվ մարդկանց մասին, ովքեր հոգ են տարել, որ մենք այսօր Ավետարանի ուրախ լուրը ստանալ կարողանանք: Հիսուս Քրիստոսը թանկ է վճարել մեզ համար, և շատ մարդիկ Հիսուս Քրիստոսի ծառայությանը զոհաբերվել են, որ մենք այսօր փրկվել կարողանանք: Ինչքան բան է զոհաբերվել, որպեսզի առաքյալների ծառայությունը այսօր մեր մեջ գործի:

Ապա Պողոսն ասում է. ,, Թանկ գնով եք գնված, նորից մարդկանց ծառաները չդառնաք,,: Խոսքը անձերին չի վերաբերում, այլ՝ դրանով նկատի է առնվում <<աշխարհի ծառաներ>> լինելը: Աստված ձեզ փրկել է, թանկ է վճարել, որպեսզի դուք նորից աշխարհի ծառան չդառնաք: Անգամ կիրառվում է << մարդկանց ստրուկ>> արտահայտությունը: Ստրուկը ազատ չէ, նա կապանքի մեջ է. Նա այլևս սեփական կամք չունի, նա պետք է անի այն, ինչ իր Տերն է ուզում, նա ստիպված է աշխատել, նա չի դրա համար որոշում կայացնում, ամեն ինչ իզուր է լինում: Մենք՝ որպես Աստծո զավակներ, չպետք է նորից աշխարհի ծառաները դառնանք: Ի±նչ է սա նշանակում:

> Ով Հիսուս Քրիստոսին հետևում է, իզուր չի անում, նա պայքարում է հավերժ կյանքի պսակի համար, ամենամեծ վարձատրության համար, որ կարող էր լինել:

Աստվածաշնչում կան բազում օրինակներ այն մարդկանց մասին, ովքեր ընտրված և փրկված էին, բայց նորից նախկին վիճակի մեջ են հայտնվում, որովհետև սխալ որոշումներ են կայացնում, ամեն ինչ կորցնում են: Հիշենք Եսավին: Նա ընտրված էր, առաջնեկ էր, պետք է առանձնահատուկ օրհնանք ընդուներ, սակայն նա գերվում է իր երկրային կարիքներով: Քանի որ նա գերված էր, չէր կարող ազատ որոշումներ կայացնել: Նա օրհնանքը փոխարինում է ոսպնապուրով: Երկրային կյանքը նրա համար ավելի կարևոր էր, քան՝ օրհնանքը: Դրա համար էլ նա դառնում է իր եղբոր ծառան: Նրա հայրը նրա այն հարցին, թե իր համար այլևս

Քարոզը լրացրեցին շրջանային առաքյալ Պատրիկ Միվանազին/ Հարավային Աֆրիկա, նկարում վերևից աջ/ և շրջանային առաքյալ Նոել Է, Բարնեսը / Կեյփ/:

օրինանք չունի, ասաց. << Քո եղբորը կարգեցի տեր քեզ վրա, իսկ նրա բոլոր եղբայրներին ծառաներ դարձրեցի…ինչ պետք է քեզ համար դեռ անեմ, որդիս>>:/1. Մովսես 27,37/

Մեզ համար մեծ վտանգ է, որ մենք մեր երկրային կարիքների ծառան դառնանք և մեզ համար մեր երկրային բարեկեցությունն ավելի կարևոր լինի, քան՝ հոգու փրկությունը: Շատերն ասում են.<< Ես չեմ կարող ժամերգությունների գալ, ես պետք է իմ աշխատանքի մասին հոգ տանեմ>>: Մյուսները ասում են. ,,Ես չեմ կարող Աստծուն հնազանդվել, ես չեմ կարող պատվիրաններով ապրել, եթե խոսքը փողի մասին է,,: Նրանք արդեն մկրտության, Սուրբ Հոգով կնունքի , կոնֆիրմացիայի ժամանակ Հիսուս Քրիստոսին հետևելու, Աստծո պատվիրաններով ապրելու որոշում են կայացրել: Բայց, քանի որ նրանք երկրայինին գերի ու ծառա են, նրանք այլևս ազատ չեն, և նրանք չեն կարողանում իրենց երդումը պահել: Իրենց երկրային կարիքների պատճառով նրանք այլևս չեն հարգում պատվիրանները:

Մենք թանկ ենք գնվել: Եկեք նորից երկրայինի ծառան չդառնանք: Մենք որոշում ենք կայացրել հանուն Տիրոջ և ազատ ենք գնալու այն ճանապարհով, որը Աստված մեզ համար է գցել:

Պողոս առաքյալը բացատրում է, որ հոգու փրկության համար կարևոր չէ, թե նրանք ստրուկ են թե ազատ, հրեա են թե ոչ հրեա, հարուստ են թե աղքատ: Դա գալիս է սրտի դիրքորոշումից: Եկեք սրտի ճիշտ դիրքորոշում ունենանք: Մենք չպետք է թույլ տանք, որ երկրային կարիքները իշխեն մեզ:

Հին կտակարանից մի այլ օրինակ էլ Սամսոնի մասին պատմությունն է, ով Իսրայելի դատավորն էր: Երբ նա ծնվեց, նրա մայրը նրան Աստծուն նվիրաբերեց: Աստված ընտրել էր այդ մարդուն, որպեսզի նա պայքարի Իսրայելի հակառակորդների՝ փղշտացիների դեմ: Այն ժամանակ այնպես էր, որ եթե մարդը նվիրաբերված է Աստծուն, եթե Աստծուն է ծառայում, իրավունք չունի իր մազերը կտրել: Յուրաքանչյուրը գիտեր, որ եթե մեկը երկար մազերով է, նա Աստծուն է նվիրաբերված, Աստծու ծառա է: Այդպես էր նաև Սամուելի պարագայում, նա ևս իրավունք չուներ մազերը կտրել /1.Սամուել 1,11/:

Սամսոնը շատ ուժեղ էր և պայքարում է փղշտացիների դեմ: Մի օր նա ծանոթանում է

Ձախում՝ գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը շրջանային առաքյալ Ժոզե Կալենգա Բազային / ծնկի եկած/ ձեռնադրում է առաքյալ, իսկ առաքյալ Ալֆոնսո Ավելինոյին / կանգնած / 30 -ամյա պաշտոնավարումից հետո ուղարկում է հանգստի:

Դալիլայի հետ , իսկ այս կինը փղշտացիներին կողմից կաշառվում է: Փղշտացիների իշխանները գալիս են նրա մոտ և ասում. ,, Համոզիր նրան և տես, թե ինչից է նա այդքան ուժ ունենում, որպեսզի մենք նրան հաղթենք, նրան կապենք և ստիպենք, այդ դեպքում մենք քեզ հարյուր հազար արծաթադրամ կտանք,,: Դալիլան ստիպում է Սամսոնին.,, Ասա, ինչումն է կայանում քո ուժը,,: Որոշ ժամանակ անց Սամսոնը տեղի է տալիս, որպեսզի նրան դուր գա և ասում է նրան. ,, Իմ գլխին ոչ մի անգամ մկրատ չի կպել, քանի որ ես մայրական արգանդից սկսած Աստծո նվիրյալ եմ: Եթե ես իմ մազերը կտրեմ, իմ ուժը կպակասի, ես կթուլանամ, ինչպես մյուս բոլոր մարդիկ/ Դատավորներ 16,5-17/: Այլ կերպ ասած, նրա ուժը գալիս էր Աստծո հետ կապից: Ի±նչ է անում կինը: Նա կտրում է Սամսոնի մազերը, այսինքն՝ նրանից հեռացնում է Աստծո հետ հարաբերվելու նշանը: Սամսոնը թուլանում է, գերի է ընկնում և դառնում փղշտացիների ծառան: Ինչու±: Որովհետև նա սխալ որոշում է կայացնում: Նրա համար կարևոր էր իր կնոջը հաճելի լինելը, քան՝ Աստծուն:

Մենք ձգտում ենք մեր տեղը հասարակության մեջ գտնել և լավ հարաբերություններ ունենալ մարդկանց հետ: Սակայն, մարդկային հարաբերությունները ավելի կարևոր չպետք է լինեն Աստծո հետ հարաբերությունից: Մենք պետք է Աստծուն ավելի շատ դուր գանք, քան՝ մարդկանց: Երբեմն մենք ստիպված ենք ասելու. ,, Ոչ, ես դա չեմ անի, անգամ, եթե դա քեզ դուր չգա, քանի որ ինձ համար Աստծուն հաճելի լինելն ավելի կարևոր է ,,:

Երրորդ օրինակը Հին կտակարանից. Իսրայելի ժողովուրդը Աստծո ընտրյալն էր: Դա, իհարկե, դուր չէր գալիս մյուս ժողովուրդներին: Մի անգամ էլ եկան փղշտացիները և կռվեցին Աստծո ժողովրդի դեմ: Թշնամիներն իրենց հետ մի հսկա մարդ ունեին, Գողիաթին, մի հսկա՝ մեծ զենքով, որից բոլորը վախենում էին: Նա կշտամբեց Աստծո ժողովրդին, ծաղրեց Աստծուն և ասաց. ,, Ընտրեք ձեզնից մեկին, ով պետք է ինձ մոտ գա, եթե նա ուզենա իմ դեմ կռվել և սպանի ինձ, մենք կդառնանք ձեր ծառաները, իսկ եթե ես նրան հաղթեմ և սպանեմ, դուք մեր ծառաները կդառնաք և կծառայեք մեզ / 1.Սամուել 17,8,9/: Իսրայելացիները վախեցան և վախից քիչ էր մնում իրենց թշնամու ծառաները դառնային: Բարեբախտաբար գալիս է փոքր Դավիթը, ով վախ չուներ: Նա գիտեր. Աստծո հետ ես կհաղթեմ Գողիաթին: Դավիթն ազատում է իր ժողովրդին:

Մենք էլ երբեմն կարծում ենք, որ մենք թույլ կլինենք, իսկ ներքև տանող ոգին այնքան ուժեղ կլինի: Նրա տեսությունները տարածվում է մեծ ուժով: Նրանք, ովքեր նրան հետևում են, այնքան հաջողակ են, իսկ մենք մեր կյանքում շատ ենք չարչարվում: Սատանան իր տրամադրության տակ շատ միջոցներ ունի, մենք չենք կարող բոլորովին նրան դիմադրել: Դա ճիշտ չէ; Անգամ, եթե մեր թշնամին այնքան ուժեղ է, մենք գիտենք, որ Քրիստոսով մենք կարող ենք հաղթել: Քրիստոսն ավելի ուժեղ է, քան՝ թշնամին: Մենք հետևում ենք Հիսուս Քրիստոսին և պայքարում ենք չարի դեմ: Նրա հետ մենք հաղթելու ենք: Մենք չենք ուզում չարի ծառան լինել:

Մի վերջին օրինակ էլ, որը Հիսուսն ինքն է տվել: Նա աշակերտներին մի պատկեր է ցույց տալիս և նրանց ասում. ,, Եթե չար ոգին մարդուց դուրս է գալիս, թափառում է չոր վայրերով, հանգիստ է փնտրում և չի գտնում, ասում է. ես ուզում եմ նորից իմ տունը վերադառնալ, որտեղից ես դուրս եմ եկել: Երբ նա ետ է գալիս, այն գտնում է ավելի լավ ու զարդարված, ապա նա նորից է դուրս գալիս և իր հետ վերցնում

Ժամերգությունից հետո գլխավոր առաքյալ Շնայդերը տեղական լրատվամիջոցներին հարցազրույց տվեց:

է ևս յոթ ոգիների, ովքեր ավելի վատն են, քան՝նա ինքը, և երբ նրանք ներս են գալիս, բնակվում են այնտեղ, այդ մարդն ավելի է զայրանում, քան՝ առաջ/ Ղուկաս 11,24-26/: Այս պատկերը մեզ ինչ-որ բան ունի ասելու:

Մեր մկրտության, Սուրբ Հոգով կնունքի միջոցով մենք մաքրվում ենք: Չարը դուրս է գալիս, այլևս իրավունք չի ունենում մեզ վրա, մենք պատկանում ենք Հիսուս Քրիստոսին: Հիմա մենք պետք է որոշենք, թե ով պետք է բնակվի մեր սրտերում:

Չար ոգին իր յոթ ընկերներով կարող էր ետ գալ, քանի որ սիրտը դատարկ էր, տեղ կար: Մենք պետք է այն բանի համար հոգ տանենք, որ Սուրբ Հոգին մեր սրտերում ապրի և ամբողջ սիրտը, այո, ամբողջ կյանքը լցնի: Հիսուս Քրիստոսով նոր արարածը պետք է մեր մեջ զարգանա: Երբ Սուրբ Հոգուց բխող կյանքը մեր սիրտը լցվի, մյուս ոգիները այլևս տեղ չեն ունենա: Բայց, եթե մարդը մկրտված ու կնքված է, իսկ նրա սիրտը լցված չէ Սուրբ Հոգով, ապա չար ոգիները նորից ետ կգան, և այդ մարդը կդժբախտանա:

Հետո դեպի մարդն է ետ գալիս այն ոգին, որը նաև Հիսուսին փորձության ենթարկելու եկավ, և ասում. ,,Հիմա օգտագործիր քո Աստծո զավակ լինելը՝ երկրի վրա ավելի լավ կյանք ունենալու համար,,: Գալիս են ժամերգությունների, բայց խոսում են միայն երկային կյանքի մասին ու ասում. ,,Սիրելի Աստված, այնպես արա, որ ես լավ լինեմ, սիրելի Աստված, չէ± որ ես քո որդին եմ, այնպես արա, որ ես հարստանամ,,: Հին ոգին նորից ետ է գալիս և նա է որոշում, թե մենք ինչ աղոթենք, թե մենք ինչ պետք է անենք: Նման մարդու վիճակն ավելի է վատանում, քանի որ նա նկատում է. դա չի գործում, ես նորառաքելական եմ, բայց ես չեմ հարստանում: Նրա վիճակն ավելի է վատանում, քան՝ առաջ էր: Մկրտվում են, կնքվում, սիրտը մաքրվում է, բայց թույլ չեն տալիս, որ Սուրբ Հոգին տարածվի: Հետո մի ուրիշ ոգին ետ է գալիս:

Մի ուրիշ օրինակ էլ. Ուզում են եկեղեցում ինչ որ արժեք է ունենալ: Խոսքը նրա մասին է, որ եկեղեցում և եկեղեցու միջոցով գալիս են որևէ արժեքի համար, երգում են երգչախմբի հետ, բայց ոչ նրա համար, որ Տիրոջը գովաբանեն, այլ, որ առջևում կանգնած լինեն: Իսկ ծառայող եղբայրն անում է ամեն ինչ, որ ավելի բարձր պաշտոն ստանա, նա ուզում է ղեկավար դառնալ: Նա դառնում է մի այլ ոգու ծառա, նա այլևս Տիրոջը չի ծառայում: Նա ուզում է միայն իր շահույթների համար աշխատել: Այն ամենը, ինչ նա անում է, ետին մտքերով է անում: Մեկն ուզում է հարստանալ, մյուսն ուզում է եկեղեցում ինչ որ արժեք լինել: Այդ մարդիկ այլ ոգու ծառաներ են դառնում, և երբեք չեն ստանում այն, ինչ ուզում են, ինչ- որ մի պահի նրանք հիասթափվում են:

Սրանք պարզապես օրինակներ են մարդկանց մասին, ում Աստված օրհնելու համար է ընտրել, բայց ովքեր սխալ որոշումներ են կայացրել: Նրանք նորից դարձել են ,, մարդկանց ծառան,,:

Մենք պետք է Քրիստոսի ծառաներն ու նաժիշտները լինենք: Հիսուս Քրիստոսի հանդեպ սիրուց նրա հետ սերտորեն ենք կապվելու: Մենք չպետք է մեր սեփական ճանապարհով գնանք, մենք հետևելու ենք Հիսուս Քրիստոսին: Մենք գիտենք. ով պայքարում է Հիսուս Քրիստոսի հետ, հաղթելու է: Ով հետևում է Հիսուս Քրիստոսին, իզուր չի անում, նա ընդունում է հավերժ կյանքի պսակը, ամենամեծ վարձատրությունը, որ կարող է լինել: Քանի որ մենք թանկ ենք գնված, եկեք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ, սպասավորներ, ծառայողներ լինենք: Վարձատրությունն աննկարագրելի մեծ է լինելու:

Հիմնական մտքեր

Գնված լինելով Քրիստոսի զոհաբերությամբ, մենք պետք է որշադրություն դարձնենք, որ՝

- երկրային բաների ծառաները չլինենք,
- Աստծուն ավելի շատ դուր գանք, քան՝ մարդկանց,
- չարի իշխանությանը չենթարկվենք,
- թույլ տանք Սուրբ Հոգուն՝ լցվելու մեր ամբողջ սիրտը:

Նորություն Հայաստանից

Առաքյալ Պավել Գամովը Հայաստանում

Առաքյալի յուրաքանչյուր այցելություն Հայաստան մեծ իրադարձություն է մեր համայնքների համար: Նման մի ուրախալի իրադարձություն մեր եկեղեցական կյանքում տեղի ունեցավ նաև այս տարվա մարտ ամսին, երբ մեզ այցելեց առաքյալ Պավել Գամովը: Հարկ է նշել, որ Պավել Գամովը ազգությամբ ռուս առաջին առաքյալն է մեր եկեղեցում: Դեռ 1993 թվականի հունվարի 1-ին, այն ժամանակվա գլխավոր առաքյալ լուսահոգի Ռիխարդ Ֆեռի ձեռնադրմամբ՝ նա ստանձնեց առաքյալի սպասքը և սկսեց իր միսսիոներական գործունեությունը մի շարք երկրներում: Մինչ այսօր նա իբրև առաքյալ ծառայում է Ալբանիայում, Լատվիայում, Լիտվայում, Վրաստանում և Հայաստանում: Շուրջ 26 տարիների հոգևոր ծառայության փորձի շնորհիվ, որ ձեռք է բերել մեր առաքյալը, անասելի բովանդակալից և հետաքրքիր է դառնում նրա հետ հանդիպելը և շփվելը: Բացառություն չէր նաև այս այցելությունը:

Հերթական անգամ նա եկավ Հայաստան մարտի 18-ին և մեզ հետ մնաց մինչև մարտի 28-ը: Այդ 10 օրերի ընթացքում առաքյալը հասցրեց լինել Հայաստանի բոլոր համայնքներում՝ ժամերգությունների ընթացքում ծառայելով մեզ Աստծո կենդանի խոսքով: Նա անցակցրեց թվով 8 ժամերգություն և մեկ եղբայրական ժամ, որը նույնպես շատ անհրաժեշտ է մեր եկեղեցու գործունեության համար, քանի որ եղբայրական սեմինարները մեծ նշանակություն ունեն Հայաստանի սպասավորների հոգևոր և կազմակերպչական մակարդակի բարձրացման առումով, ինչն իհարկե, շատ կարևոր է բոլորիս համար: Բացի այդ, ամենաուրախալին այն է, որ այս այցելության ժամանակ առաքյալի ձեռնադրմամբ Հայաստանի 5 համայնքներում ընդհանուր թվով 17 հոգի ապրեցին վերածնունդ՝ կնքվեցին Սուրբ Հոգով: Ներկայիս աշխարհում տիրող ու զարգացող անիրավության պայմաններում՝ իսկապես մեծ և մի յուրահատուկ ուրախություն է տեսնել Աստծո զավակների թվի նոր ավելացումը:

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Առաքյալ Պ. Գամովը երիտասարդների հետ

Մենք շնորհակալությամբ ենք ընդունում առաքյալի յուրաքանչյուր այցը մեր երկիր և, անշուշտ, մեծապես գնահատում ենք նրա անձնական, հոգևոր և ֆիզիկական զոհողությունների ներդրումը մեր եկեղեցական կյանքում , և իհարկե, սիրով սպասում ենք նրա նոր այցին Հայաստան, որը սպասվում է արդեն այս ամռանը:

Հիսուսն աղոթում է Գեթսեմանի պարտեզում

/ ՄԱՐԿՈՍ 14,26–43 /

Զատկի տոնին Հիսուսը վերջին անգամ ընթրեց իր աշակերտների հետ: Հիսուսը գիտեր, որ իրեն շուտով դավաճանելու են և ինքը պետք է զոհաբերվի: Իր աշակերտների հետ նա գնում է Ձիթենյաց լեռ:

Գեթսեմանի պարտեզի ճանապարհին Հիսուսն ասում է իր ընկերներին.
,, Քիչ ժամանակ հետո դուք ինձ լքելու եք: Անգամ մի մարգարե դեռ շատ վաղուց կանխատեսել է, որ ոչխարները կցրվեն, եթե հովիվը սպանվի: Սակայն ես հարություն եմ առնելու մահից և կրկին երևալու եմ ձեզ,,:
Պետրոսն ընդդիմանում է.,, Թեկուզ բոլորն էլ գայթակղվեն, ես քեզ չեմ թողնի,,:
Հիսուսն ասում է նրան. ,, Ճշմարիտ եմ ասում քեզ, որ դու այս գիշեր իսկ, դեռ աքաղաղը չկանչած, երեք անգամ պիտի ուրանաս ինձ,, :
Պետրոսը պնդում է.,, Թե քեզ հետ մեռնել իսկ հարկ կլինի, քեզ չեմ ուրանա,,: Մյուս աշակերտներն էլ նույնն էին ասում:
Երբ նրանք հասան Գեթսեմանի պարտեզը, Հիսուսն իր աշակերտներին ասաց, որ նրանք նստեն, մինչ ինքը կաղոթի:



Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին իր հետ տարավ: Հիսուսի հոգին մեռնելու աստիճան տխուր էր: Այդ երեքին նա ասաց.,, Մնացեք այստեղ և արթուն կացեք,,:
Եվ փոքր ինչ առաջ գնալով՝ երեսի վրա ընկավ գետնին և աղոթում էր. ,, Հայր, եթե կարելի է, այս բաժակը ինձնից հեռացրու, բայց ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ՝ ինչպես դու ես կամենում..:
Երբ նա ետ վերադարձավ, բոլոր աշակերտներին քնած գտավ: Նա արթնացրեց Պետրոսին.,, Ննջում ես, չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ: Արթուն կացեք և աղոթեցեք,,:
Հիսուսը նորից մի քիչ հեռացավ, աղոթքի կանգնեց ու նույն բաներն ասաց:
Երբ նա ետ վերադարձավ, նրանց քնի մեջ գտավ, որովհետև նրանց աչքերը ծանրացել էին և չէին իմանում, թե ինչ պատասխան տան նրան:
Երրորդ անգամ Հիսուսն աղոթեց և կրկին Պետրոսը, Հակոբոսը ու Հովհաննեսը քուն մտան:
Նա արթնացրեց նրանց և ասաց, որ ժամը եկել է, երբ ինքը մատնության պետք է ենթարկվի:
Այդ պահին նրան մոտեցան Հուդան՝ դավաճանը և զինված ամբոխը, որպեսզի ձերբակալեն Հիսուսին:

Գեթսեման նշանակում է յուղամամլիչ: Այն ձիթենիներով լի պարտեզ է: Գտնվում է Երուսաղեմից դուրս՝ Ձիթեյնաց լեռան ստորոտին:

ԱՅՑ ԷԼԲԵՐՏԻՆ՝ ՅՈԳԻԱԿԱՐՏԱ / ԻՆԴՈՆԵԶԻԱ

Լուսանկարը՝ Մարիամի

Իմ անունը Էլբերտ է և ես 11 տարեկան եմ: Ես ապրում եմ Յոգիակարտայում՝ ինդոնեզական Ճավա կղզու վրա; Ես եղբայրներիցս ամենակրտսերն եմ, իմ երկու եղբայրները 22 և 18 տարեկան են:

Ամեն օր իմ հեծանիվով գնում եմ դպրոց, բարեբախտաբար այն տնից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա է գտնվում : Ես սովորում են հինգերորդ դասարանում, ամենաշատը ես սիրում եմ բնագիտական առարկաները: Շաբաթական մեկ անգամ գնում են ջութակի պարապմունքների:

Կեսօրից հետո կատարում եմ տնային առաջադրանքները, ապա օգնում եմ մայրիկիս տնային գործերում: Իմ սիրած զբաղմունքները ջութակ նվագելն ու ընթերցանությունն են: Ես սիրում եմ հոչակավոր մարդկանց մասին գրքերը:

Կիրակի առավոտյան գնում եմ կիրակնօրյա դպրոց, այնտեղ ես շատ ընկերներ ունեմ: Ես սիրում եմ եկեղեցում երգելը: Երբեմն ժամերգության ժամանակ իմ ջութակով նվագակցում եմ երգչախմբին:

Իմ հայրը եկեղեցու ծառայում է որպես առաքյալ: Ես նրան շատ եմ սիրում և միշտ աղոթում եմ նրա համար, երբ նա ճանապարհներին է լինում: Երբեմն ես էլ եմ իրավունք ստանում նրա հետ մեկնելու, օրինակ, Ջակարտայի Կեդոյա համայնք: Ինդոնեզական համանքներում երբեմն երգեհոն չի լինում, դրա փոխարեն նվագախումբն է նվագում:

Ամբողջ տարին ես ուրախանում եմ երեխաների օրվա համար: Այնտեղ ես հանդիպում եմ շատ այլ երեխաների և կարողանում եմ նրանց հետ խաղալ; Քանի որ իմ հայրը շատ շրջաններում է ծառայում, ես երեխաների օրերին մասնակցում եմ Յոգիակարտայում, Արևմտյան Ճավայում, Ջակարտայում և Պանթայի Ութարա Ճավայում: Լուսանկարներից դուք կտեսնեք, թե ինչ հաճույք է դա ինձ պարգևում:

Բազմաթիվ զբոսաշրջիկներ են գալիս Յոգիակարտա, նաև՝ շատ ուսանողներ ամբողջ Ինդոնեզիայից, քանի որ այստեղ շատ համալսարաններ կան: Քաղաքում կարելի է տեսնել սուլթանի պալատը: Եթե մոտ 30 կմ դեպի հյուսիս մեկնեն, կարող են տեսնել Մերապիի լեռը, դա աշխարհի ամենաակտիվ հրաբուխն է: Յոգիակարտայից մոտ 40 կմ հարավ կան հրաշալի լողափեր: Ես հաճախ եմ գնում լողափ:

Իմ սիրած ուտեստը նազի գորենգ ճավան է, ճավայական ձևով տապակած բրիձը, կամ մագելանագնն է, որը տապակած բրնձի և վերմիշելի խառնուրդ է; Դրանից հետո խմում եմ ինգվեր թեյը:

Արձակուրդներին ես այցելում եմ հորեղբորս, Ջակարտա, Ինդոնեզիայի մայրաքաղաք: Այնտեղ շատ հետաքրքիր բաներ կան տեսնելու: Մի անգամ ես եղել եմ բուսաբանական այգում: Դրան է պատկանում նաև առանձնահատուկ թռչուններով թռչնի պուրակը: Նրանցից մեկը թռավ իմ ուսի վրա, դա շատ հուզիչ էր:

Միրելլա Ֆորթունատո

Լուսանկարը՝ zhu difeng - Fotolia.com

Տեսություն ապագա երևույթների վերաբերյալ

2015 թ.-ի սեպտեմբերին լույս տեսավ Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունը հարցերով և պատասխաններով: Շուրջ 750 հարցերից և պատասխաններից՝ community-ին առանձնացնելով ներկայացնում է մի քանի հարցեր և պատասխաններ: Այս հրատարակության մեջ խոսքը գնում է ,, Ապագա երևույթների վերաբերյալ տեսության,, և ,,Քրիստոնեության պատմության,, մասին:

Ապագա ո՞ր իրադարձությունն է նորառաքելական քրիստոնյաների հավատքի նպատակը:

Հիսուս Քրիստոսը նորից է գալու- դա Ավետարանի գլխավոր խոստումն է: Նրա համբարձումից ի վեր առաքյալները տեղեկացնում են Տիրոջ գալստյան մասին: Այդ իրադարձության ժամանակ նրա կողմից ընդունվելը նորառաքելական քրիստոնյաների հավատքի նպատակն է:

Ո՞վ է խոստացել Հիսուս Քրիստոսի գալուստը:

Հիսուս Քրիստոսն ինքն է իր առաքյալներին խոստացել. ,, Եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք/Հովհ. 14,3/: Հիսուսի այս խոստումը նրա համբարձման ժամանակ հաստատվեց հրեշտակների կողմից. ,, Այս Հիսուսը,որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը,, : / Գործք 1,11/

Ո՞վ գիտի Քրիստոսի գալստյան ժամանակը:

Հիսուս Քրիստոսի գալստյան օրվա և ժամի մասին չգիտեն ոչ մարդիկ, ոչ էլ հրեշտակները, այլ՝ գիտի միայն Սուրբ Երրորդություն Աստվածը:

Ի՞նչ նշանակություն ունի մեզ համար Քրիստոսի գալստյան խոստումը:

Որ Հիսուս Քրիստոսը կրկին պիտի գա ու իր հարսնացուական համայնքին իր հետ տանի, Ավետարանի հիմնական հավաստիությունն է: Նա ինքն է խոստացել իր գալուստը / Հովհ. 14,3/

Ինչու՞ ենք հավատում, որ Քրիստոսի գալուստը մոտ է:

Որ առաքելոց ծառայությունը կրկին հաստատվեց, նշան է այն բանի, որ Քրիստոսի գալուստը մոտ է: Սպասումը, որ Տիրոջ խոստումը իրականանում է, այսօր էլ նորառաքելական հավատքի կենտրոնում է, ինչպես յուրաքանչյուրի այն հույսը, որ Քրիստոսի գալուստը անձնապես տեսնելու է ու նրան պատկանելու:

Ինչպե՞ս է տեղի ունենում Քրիստոսի գալստյան պատրաստումը:

Առաքյալները խոսքով և հաղորդությամբ հավատացյալներին նախապատրաստում են Քրիստոսի գալստյանը: Նրանք իրենց կյանքը ձևավորում են դրա հիման վրա:

Ի՞նչ տեղի կունենա Քրիստոսի գալստյան ժամանակ:

Այս մասին ամփոփ ասվում է Պողոս առքյալի խոսքում. Քրիստոսի գալստյան ժամանակ ,նախ նրանք, ովքեր Քրիստոսով են մահացել, հարություն են առնելու: Ողջերը, ովքեր նախապատրաստվել են Քրիստոսի գալստյանը, կերպարանափոխվելու են, առանք մարմնական մահի: Մահացածներն ու ողջերը ընդունելու են փառահեղ մարմին: Այդ մարմինը նմանվելու է Քրիստոսի հարության մարմնին: Նրանք Հիսուս Քրիստոսի հետ միասին գնալու են հավերժ միասնության Սուրբ Երրորդություն Աստծո հետ: Այս իրադաձությունները պատկանում են առաջին հարությանը, որի մասին գրված է Հայտնության 20, 5,6 –ում:

Ո՞վ կպատկանի Քրիստոսին գալստյան ժամանակ:

Քրիստոսի գալստյան ժամանակ նախ նրանք կպատկանեն, ովքեր վերստին ծնվել են Սուրբ ջրով և Հոգով, հավատում են Հիսուս Քրիստոսին և հետևում են նրան: Այդ խումբն անվանվում է ,, հարսնացուական համայնք,, կամ ,,տղա,, / Հայտնություն 12,5/: Թե, դրանից բացի, Աստված մյուսներին իրեն պատկանելու ողորմածությանը կարժանացնի, կբխի մարդկային դատումից և Աստծո որոշումից:

Կա՞ նշան նրանց համար, ովքեր պատկանում են հարսնացուական համայքին:

Այո, մի արտակարգ նշան է այն, որ նրանք ամեն օր սպասում են Քրիստոսի գալստյանը և հաստատուն են աղոթքի մեջ. ,, Տեր, շուտ արի../ Հայտնություն 22, 17, 20 /

Ի՞նչ իրադարձություններ է ընդգրկում առաջին հարությունը:

Առաջին հարության ժամանակ ,, Քրիստոսով մահացածները,, հարություն են առնելու և ողջերի հետ միասին, ովքեր պատկանում են հարսնացուական համայքին, համբարձվելու են …: Երկնքի հարսնանիքից հետք ,,մեծ վշտի,, մարտիրոսները հարություն են առնելու և պատկանելու են թագավորական քահանայությանը: Այս երկու իրադարձությունները բնորոշվելու են որպես առաջին հարություն. ,, Երանի այն սրբերին, որ բաժին ունեն առաջին հարության մեջ: Սրանց վրա երկրորդ մահը իշխանություն չունի, նրանք պիտի լինեն Աստծու և Քրիստոսի քահանաներ և նրա հետ թագավորեն հազար տարի,,: / Հայտնություն 20,6/

Ի՞նչ է հետևելու առաջին հարության ավարտին:

Առաջին հարության ավարտից հետո Քրիստոսը երկրի վրա հաստատելու է իր խաղաղության թագավորությունը և իր թագավորությունը ղեկավարելու է հազար տարի: Այս հազար տարին խորհրդանիշն է երկար, սակայն սահմանափակ ժամանակի:

Ի՞նչ է լինելու երկրի վրա այդ խաղաղության թագավորության ժամանակաշրջանում:

Քրիստոսի ծաղաղության թագավորության ժամանակաշրջանում Հիսուս Քրիստոսը թագավորական քահանայությամբ տեղեկացնելու է Ավետարանը: Ավետարանը մատուցվելու է երկրի վրա ապրողներին և ննջեցյալ հոգիներին: Խաղաղության թագավորության վերջում բոլոր ժամանակների բոլոր մարդիկ Հիսուս Քրիստոսի Ավետարանը ճանաչած կլինեն:

Ի՞նչ է պատահելու նրանց հետ, ովքեր արժանանալու են Վերջին դատաստանին:

Նրանք, ովքեր Վերջին դատաստանին ողորմածություն կգտեն, նրանց հետ միասին, ովքեր առաջին հարությանն են մասնակցել, կլինեն Աստծո նոր արարչագործության բնակիչները: Նրանք բոլորը իրավունք կունենան միասնություն կազմել Աստծո հետ: Մյուսները կմնան Աստծուց հեռու, թշվառության մեջ:

Ի՞նչ է ասվում Աստվածաշնչում Աստծո նոր արարչագործության մասին:

Վերջին դատաստանից հետո Աստված հնի տեղը նոր արարչագործություն է անելու. ,, Նա / Աստված/ պիտի բնակվի նրանց հետ, և նրանք պիտի լինեն նրա ժողովուրդը, և նա էլ նրանց Աստվածը,,/ Հայտնություն 21,3/: Դրանով իրականանում է այն սպասումը, որը 2.Պետրոսի 3,13- ում է գրված. ,, Սակայն մենք սպասում ենք նոր երկնքի և նոր երկրի՝ ըստ նրա խոստման, որտեղ արդարությունը կբնակվի,,: Աստծո այս թագավորությունը հավերժ է լինելու, Աստված լինելու ամեն ինչ ամեն ինչում: / 1. Կորնթ, 15,28

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան – Լյուք Շնայդեր, Իուբերլանդշթրասե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն ՓԲԸ, Ֆրանկֆուրտյան փող. 233,63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Քրիստոնեության պատմությունից

Ինչպե՞ս հիմվեցին առաջին քրիստոնեական համայնքները
Հոգեգալստյանը Երուսաղեմում առաջացավ առաջին քրիստոնեական համայնքը / Գործք 2,37/, որը միայն հրեաներից էր բաղկացած: Հալածանքների պատճառով շատ հավատացյալներ փախան Երուսաղեմից / Գործք 8,1, 11,19/ Իրենց նոր շրջապատում նրանք տեղեկացրին Ավետարանը, որն այդտեղ ևս հավատ գտավ: Այսպես, այլ վայրերում ևս առաջացան քրիստոնեական համայնքներ:

Ինչպե՞ս զարգացավ քրիստոնեությունը 2-րդ դարից սկսած:
Այն, ինչ սկսվեց սարկավագ Ստեփանոսի քարկոծումից հետո, աճեց հետապնդումների ալիքների: Շատ քրիստոնյաներ իրենց հավատի պատճառով սպանվում էին: Դրանով նրանք դառնում էին մարտիրոսներ: Չնայած հալածանքներին և հակադրություններին՝ քրիստոնեական հավատը տարածվում էր ողջ Հռոմեական կայսրությունում:

Ինչպե՞ս տեղի ունեցավ քրիստոնեության զարգացումը մինչև միջնադար:
Ժողովուրդների տեղաշարժերի ժամանակ /4,5-րդ դարեր/ քրիստոնեությունը Եվրոպայում և Ասիայում ուժեղ թափ ստացավ: Քրիստոնեության տարածման գործում նշանակալից դեր խաղաց վանականությունը, որ 3–րդ դարից սկսած առաջինը Եգիպտոսում հիմվեց: Վանականի գլխավոր առաջադրանքն էր իր կյանքը աղքատության մեջ Քրիստոսի օրինակով տանելու և քրիստոնեական հավատը կրելու: Միջնադարում վանականներն ու միանձնուհիները ակնառու վաստակ են ունեցել գիտության մեջ, որն արտահայտվել է գյուղատնտեսության և սոցիալական ոլորտներում: Քրիստոնեությունն ավելի ու ավելի էր որոշում մարդկանց կյանքը, մշակույթը, քաղաքականությունը և հասարակությունը Եվրոպայում: 1054 թվականին արևմտյան եկեղեցին բաժանվեց հռոմեական-կաթոլիկ և արևելյան / օրթոդոքս/ եկեղեցիների:

Ինչո՞վ էր պայմանավորված 7 –րդ դարից սկսած քրիստոնյաների ավելացող առանձնացումները:
7-րդ դարից սկսած քրիստոնյաները ստիպված էին Ասիայի, Աֆրիկայի և նաև Եվրոպայի առանձին մասերում մի նոր կրոնի՝ իսլամի պատճառով հեռանալ: Շատ շրջաններում քրիստոնեական հավատը կորել էր. Օրինակ, Առաջավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: Պայքար էին մղում խաչակիրները: Դրանք տեղի էին ունենում 1095 և 1270 թվերին Արևելքում և նպատակ ունեին Երուսաղեմը և Սուրբ Երկիրը քրիստոնեության համար նվաճել:

Ինչու՞ ձգտումներ առաջացան եկեղեցու ռեֆորմի համար:
Միջնադարում եկեղեցու ներսում ավելի ու ավելի շատ էր աշխարհականացումը- հավատն ու ուսմունքը կորցրել էին իրենց արժեքը: Ավետարանով առաջնորդվելը պակասում էր, դրա համար էլ ձգտում էին եկեղեցու ռեֆորմ անցկացնել: Մի կողմից վանականները, մյուս կողմից այլ տղամարդիկ, ինչպիսիք էին ֆրանսիացի Պետրոս Վալդեսը / 1140, մահացած 1218-ից առաջ/, անգլիացի աստվածաբան Հովհաննես Վիքլիֆը/1330-1384/ և Պրագայի համալսարանի ռեկտոր Հովհաննես Հուսը/1368-1415/ ձգտում էին եկեղեցու ռեֆորմի: Նրանք բոլորն էլ եկեղեցու աշխարհականացման հետևողական քննադատներ էին: Նրանց կողմից ձեռնարկվող և ուղեկցվող շարժումները ընդգրկեցին Եվրոպայի այլ մասեր և վերջապես հանգեցրին ռեֆորմացիայի:

Ի՞նչ է ռեֆորմացիան:
Ռեֆորմացիան / լատիներեն ,,ռեֆորմաթիո,, նորացում, վերստեղծում բառերից/ կրոնական նորարարական շարժում է Եվրոպայում, որը հիմվեց Ավետարանի վերաիմաստավորման ցանկության վրա: Այն սերտորեն կապված է գերմանացի վանական Մարտին Լյութերի հետ/ 1483 1546/: Տեսության համար միակ հիմքը՝ ըստ նրա թարգմանության, Հիսուս Քրիստոսի մասին աստվածաշնչյան վկայությունն է: Լյութերը Աստվածաշունչը եբրայերենից և հունարենից թարգմանել է գերմաներեն և դրանով ժողովրդի համար այն մատչելի դարձրել: 1534թվին Անգլիայում ինքնուրույն հիմվեց անգլիկան պետական եկեղեցին:

Ինչպիսի՞ն էր քրիստոնեության վիճակը 19-րդ դարում:
19-րդ դարում փորձ արվեց մարդկանց, ում համար

քրիստոնեական հավատը իրենց աղքատության և չիմացության պատճառով օտար էր դարձել, կրկին դեպի Ավետարանը դարձնել / ներքին առաքելություն/: Այս նպատակով հիմվեցին ,,միսիոներական միություններ,, . Նրանք հոգ էին տանում եվրոպական երկրիներից դուրս, ամենից առաջ Աֆրիկայում քրիստոնեության տարածման համար:

Ի՞նչ կարևոր զարգացումներ ունեցավ 19-րդ դարի քրիստոնեությունը:
Մեծ նշանակություն ունեցան այսպես կոչված ,, զարգացման շարժումները,, -առաջինը Անգլիայի բողոքականության ներսում և ԱՄՆ-ում: Հավատացյալ քրիստոնյաներին կոչ էր արվում սովորույթային քրիստոնեությունից դառնալու կենդանի քրիստոնեական հավատի: Ավետարանի համաձայն այդ կոչը կապված էր Քրիստոսի գալստյան հույսի հետ: Սա այն պատմական հենքն է, որի առաջ Աստված առաքյալների նոր գործունեությունն էր նախապատրաստում:

Ինչպե՞ս տեղի ունեցավ առաքյալների ծառայության վերականգնումը 19-րդ դարում:
1826 և1829 թվերին հավատացյալ տղամարդիկ Ալբուրիում/ հարավային Անգլիա / հավաքվեցին կոնֆերանսի , որպեսզի միասին զբաղվեն Հովհաննեսի Հայտնությամբ: Այդ կոնֆերանսներին հետևեցին՝ բանկիր Հենրի Դրումմոնդի/ 1786 1860/ հրավերքը՝ միասին աշխատելու Էդվարդ Իրվինգի/ 17921834/հետ,որը շոտլանդականազգայինեկեղեցու հոգևորական էր: Կոնֆերանսի մասնակիցները ուզում էին հստակեցնել աստվածաշնչյան խոսքերը Սուրբ Հոգու ազդեցության և Քրիստոսի գալստյան վերաբերյալ: Շոտլանդիայում ևս տարբեր դավանանքների հավատացյալները սպասում էին Սուրբ Հոգու ուժեղ ազդեցության: Այդ թվում նաև հիվանդությունների բուժում, անհասկանալի լեզուներով խոսքեր, գուշակություններ: 1832-ի աշնանը Սուրբ Հոգով և Հենրի Դրումմոնդի կողմից առաքյալ է ձեռնադրվել Ջոն Բատե Կարդալեն / 1802- 1877/ Լոնդոնում: 1833-ի սեպտեմբերից ևս 11 առաքյալ է գուշակության միջոցով, ամենից առաջ մարգարե Օլիվեր Թափլինի կողմից / 1800-1862/ ձեռնադրվել:

Ինչպե՞ս հիմվեց կաթոլիկ առաքելական եկեղեցին:
1835-ին առաքյալները՝ մեկ տարով վերադարձան Ալբուրի՝ միասնական ինտենսիվ խորհրդակցությունների համար: Նրանք մշակեցին ,, մեծ թեսթիմոնիումը,,/ 1837/, մի ճանաչողական գրություն, որը ներկայացնում է քրիստոնեության բոլոր հոգևոր և աշխարհիկ առաջնորդներին: Թեսթիմոնիումում առաքյալները հորդորում են քրիստոնյաներին հավաքվելու իրենց ղեկավարության ներքո և նախապատրաստվելու Քրիստոսի գալստյանը: Պետք չէր նոր եկեղեցի հիմել, այլ՝ գործող տարբեր եկեղեցիները պետք է հավաքվեին առաքյալների ծառայության ներքո: Սակայն, շատ քրիստոնյաներ առաքյալների կոչը չընդունեցին: Քիչ քրիստոնյաներ, ովքեր հավատում էին առաքյալներին, միավորվեցին մի նոր եկեղեցու ներքո, որը կաթոլիկ-առաքելական եկեղեցին էր:

Ինչպե՞ս հինադրվեց նորառաքելական եկեղեցին:
1862-ի հոկտեմբերի 10-ին քարոզիչ Ռուդոլֆ Ռոսոխակին/ 1815-1894/ այդտեղի կաթոլիկ-առաքելական եկեղեցու առաջնորդը, մարգարե Գեյերի կողմից առաքյալ կարգվեց: Կաթոլիկ-առաքելական եկեղեցու առաքյալները չճանաչեցին այդ կոչումը: Մարգարե Հայնրիխ Գեյերը և Համբուրգի կաթոլիկ-առաքելական համայքնի ղեկավարը,Ֆրիդրիխ Վիլհելմ Շվարցը/ 1815-1895/ սակայն համոզված էին, որ այդ կոչումը Սուրբ Հոգու գործն է: 1863-ի հունվարի 4-ին Համբուրգի համայնքը ընդունեց առաքյալի այդ կոչումը և հեռանում է կաթոլիկ-առաքելական եկեղցուց: 1863-ի հունվարին սկիզբը դրվեց նորառաքելական եկեղեցու: Նաև, երբ առաքյալ Ռոսոխակին դրանից կարճ ժամանակ անց հեռացավ իր պաշտոնից, Գեյերը, Շվարցը ր Համբուրգի համայնքը ամրագրեցին, որ խոսքը գնում է աստվածային կանչի մասին:

Լուսանկարը՝ Գեթեի Յոհաննինգ

Լուսանկարը՝ Ֆրանկ Շուլցի

Մահացածներին օգնական լինելը աստվածային կամքի դրսևորում է

Մահացած հարազատների հիշատակի արարողություններ կան բոլոր եկեղեցիներում – շատ կամ քիչ արտահայտված: Որոշ օրթոդոքս հավատքի համայնքներ այն նշում են գերեզմանի մոտ հացով և թխվածքով, այլ եկեղեցիներ անց են կացնում հիշատակի ժամերգություններ: Նորառաքելական եկեղեցին տարվա մեջ երեք անգամ ննջեցյալների համար ժամերգություն է անցկացնում:

,, Տարեկան երեք անգամ – մարտի, հուլիսի և նոյեմբերի առաջին կիրակի օրերին- տեղի են ունենում ժամերգություններ ննջեցյալների համար,,: Նորառաքելական եկեղեցու դավանաբանության 12. 1. 13 կետում է դա գրված: Այս առումով նկարագրվում է մի պրակտիկա, որը թեև կոնկրետացվում է եկեղեցու պատմության ընթացքում, սակայն ի սկզբանե առկա էր: Դեռ առաքյալ Ֆրիդրիշ Շվարցն էր / 1815-1895/ ըստ դրա գործում: Առաքյալի վաղ ճանապարհորդական տեղեկություններում մենք հաճախ ենք գտնում կոնկրետ ապացույցներ, թե ինչ շատ ապրողներ և մահացածներ են կնքվել: Ներկայիս պրակտիկան- տարվա մեջ երեք ժամերգություն ննջեցյալների համար- գալիս է 1954 թ-ից, այդ ժամանակվա գլխավոր առաքյալ Յոհանն Գոթֆրիդ Բիշոֆֆից: Դրա համաձայն ննջեցյալ հոգիները առաքյալների միջոցով այդ կիրակի օրերին Սուրբ Հաղորդություն են ստանում և տարվա մեջ երեք անգամ հատուկ ժամերգություններ են տոնվում, որի ընթացքում փրկություն փնտրող հոգիներին Սուրբ Հաղորդություն է նվիրաբերվում:

Հին եկեղեցական սովորություններ

Ննջեցյալների համար ժամերգությունը կոչվում է հաղորդության խորհրդի արարողություն այնտեղ, որտեղ գլխավոր կամ շրջանային առաքյալները տոնում են ժամերգություն: Մնացած բոլոր համայնքներում

այն հիշտակի ժամերգություն է: Դավանաբանության մեջ նշվում է հին եկեղեցական մի ավանդույթ.,, Դեռ կորնթացիների համայնքում ողջերը մկրտվում էին մահացածների համար /1, Կորնթացիներ 15,29/: Այս պրակտիկան շարունակվում է ննջեցյալների ժամերգությամբ, որոնք անց են կացնում գխավոր կամ շրջանային առաքյալները: Այդ ժամանակ երկու ծառայող եղբայր մահացածների համար ընդունում են Սուրբ ջրով մկրտությունը, Սուրբ կնունքը և Սուրբ Ընթրիքը: Խորհուրդը կատարվում է նույն ձևով, ինչպես այն տեղի է ունենում ընդհանրապես: Մնացած համայնքներում Սուրբ Ընթրիքի տոնակատարությունից հետո հատուկ աղոթք է արվում ննջեցյալների համար:

Աստծո փրկության պատվիրանը վերաբերվում է բոլորին

ՆՆջեցյալների համար ժամերգությունները նորառաքելական եկեղեցու տարվա մեջ կարևոր տեղ ունեն: Մինչ տվյալ կիրակի օրը համայնքների համար տեղի է ունենում նախապատրաստություն: Գթասրտությունն ու կարեկցանքը պետք է ննջեցյալների համար բարեխոսություններ լինեն: Վաղը քարոզի հիմք է լինելու 95,6 սաղմոսը.,, Եկեք, երկրպագենք և ծնկի գանք և խոնարհվենք Տիրոջ առաջ, ով մեզ ստեղծել է,,:

Այս խոսքերն էին ուղղվում այն ժամանկ աղոթող համանքին: Աստծուն երկրպագել, ով ստեղծել է աշխարհը և ղեկավարում է իր անկախությամբ: Նման վերաբեմունքը անհրաժեշտ է ննջեցյալների համար կիրակիներին: Վերջապես պետք է շատ հավատ լինի այն բանի հանդեպ, որը մարդը չի տեսնում կամ բնագիտորեն չի կարող հաշվարկել: Չնայած մեր սահմանափակությանը՝ կա փրկություն ողջերի և մահացածների համար հավասարապես – այդպես է Աստծո կամքը:

Առաքյալների ծառայությունն անհրաժեշտ է

Վաղ ետառաքելական շրջանում եկեղեցին մերժել է մահացածների համար հաղորդության ներկայացուցչական նվիրաբերումը, իսկ 397 –ին Կարթագենի 3 –րդ եկեղեցական ժողովը արգելում է մահացածների մկրտությունը: Նորառաքելական տեսանկյունից սա զարմանալի չէ, քանի որ միայն առաքյալների ծառայության վերահաստատումից հետո, 1830-ականներին հնարավոր եղավ այս վաղքրիստոնեական պրակտիկայի վերածնունդը:

Նորառաքելական դավանաբանությունը առաքյալների ծառայությանը վերապահեց հաղորդության նվիրաբերումը.,, Հիսուսի առաջադրանքը՝ Ավետարանը տեղեկացնելու, մեղքերը ներելու և հաղորդությունը նվիրաբերելու, առաքյալները կատարում են ողջերի և մահացածների համար: Նրանք գործում են Քրիստոսի փոխարեն և նրա անունով: Ինչպես Հիսուս Քրիստոսը երկրի վրա զոհաբերվեց, այդպես էլ տեղի է ունենում փրկության հաղորդումը առաքյալների միջոցով երկրի վրա: Քանի որ խորհուրդները տեսանելի կողմ ունեն, նրանք կարող են իրականանալ միայն տեսանելի ոլորտում: Հաղորդության ազդեցությունը որպես փրկության հաղորդման էական բաղադրիչ, հավասար է ողջերի և մահացածների համար,, / ՆԱԵ Դ 9.6.3/ :

Ոչ մի ոգեհարցություն

ՆՆջեցյալների համար նորառաքելական ժամերգությունների ժամանակ հաղորդության խորհրդի կատարումը չպետք է շփոթել ոգեհարցության հետ: Խոսքն այն մասին չէ, որ պատկերացում են ստանում անդրշիրիմյան աշխարհի մասին կամ ծանոթանում դրա հետ: Խոսքը անդրշիրիմյան աշխարհի ճանաչողության կամ մահացածների վիճակի մասին չէ: Ոչ մի դեպքում անդրշիրիմյան աշխարհը չպետք է ընդհանրացվի այս աշխարհի հետ և այդ տեսանկյունով ներկայացվի: Ոչ մի մետաֆիզիկական հետաքրքրություն չպետք է զոհացվի: Խոսքը փրկության մասին է, որը Աստծո կամքի համաձայն հավասարապես վերաբերվում է ողջերին և մահացածներին: .



Լուսանկարը՝ Մարսել Ֆերլե

Նախատեսում

03.07.2016	Վանքուվեր / Կանադա
09.07.2016	Տիրանա / Ալբանիա
10.07.2016	Տիրանա / Ալբանիա
15.07.2016	Չիկապա / Կոնգոյի ԴՀ
17.07.2016	Կանանգա / Կոնգոյի ԴՀ
22.07.2016	Կամպալա / Ուգանդա
24.07.2016	Կամպալա / Ուգանդա
07.08.2016	Լայպցիգ /Գերմանիա
14.08.2016	Հայլբրոնն / Գերմանիա
11.09.2016	Ինսբրուք / Ավստրիա
18.09.2016	Քրեֆելդ / Գերմանիա
24.09.2016	Գրամադո / Բրազիլիա

New Apostolic Church
International